# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1999-Ա « 03 » հունիսի 2024 թ.

ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՍՄԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ Հ. 025 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարիամ Աղաջանյանի դիմումը՝ Դալմայի այգիներում գտնվող՝ 2000 քմ մակերեսով հողամասի համար 2005թ. օգոստոսի 1-ին կնքված վարձակալության հ. 025 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 2005թ. հունիսի 9-ի հ. 1250-Ա որոշումը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնելու մասին 2005թ. օգոստոսի 1-ին կնքված հ. 025 պայմանագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2024 թվականի ապրիլի 5-ի հ. 579 վկայագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ և 620-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 21-ի հ.1530-Ն և 2015 թվականի հունիսի 25-ի հ. 703-Ն որոշումներով, Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ. 50-Ն որոշման հավելվածով.

1. Լիազորել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Մարիամ Աղաջանյանի հետ կնքել համաձայնագիր՝ Դալմայի այգիներում գտնվող՝ 2000 քմ մակերեսով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրված հողամասի համար 2005թ. օգոստոսի 1-ին կնքված վարձակալության հ. 025 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրում հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրում «Հասմիկ Աղաջանյան AC0459398 012 Խաչատրյան փ 33/1» բառերը փոխարինել «Մարիամ Աղաջանյան» բառերով.

2) պայմանագրի 13-րդ կետում նշված «900055040068» թիվը փոխարինել «900055040233» թվով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**